state of social infrastructure, etc. can become a threat to forced migration of the population.

The source of threats in the social sphere can be both structural dysfunctions of society (demographic, professional, ethnic and other imbalances in the structure of society) and psychological (anomie, unmet needs for security, unmet demand for social justice, uncertainty about the future, etc.) ...

Among the many possible indicators of social risk, forced migration stands out. It can pose real or potential threats to almost any aspect of security.

In what manifestations of social life, or through what socio-economic problems the influence of migration on the state of social security is refracted, the range of possible answers is quite wide.

Keywords: global transformation, social threats, social risk, social security, forced migration .

ԱԶԳԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀԱՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ՍՈՑԻԱԼ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏ

Էդիկ Կյուրեղյան
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող

Մ.թ. երրորդ հազարամյակի ու 21-րդ դարի երրորդ տասնամյակի սկիզբը մարդկության հայեցողությանը նախ և առաջ ներկայանում է որպես աշխարհաճանաչողության ու գիտելիքի կիրառման աննախադեպ որակա-քանակական մակարդակ ու մասշտաբներ: Այն, ինչը նաև բերել է /«բերում է», «բերելու է»/ գոյապահպանության ու զարգացման «հին» հիմնախնդիրների սրացման, նորերի առաջացման: Մարդկության, որպես ինքնազարգացող ու ինքնակառավարվող կիբեռնետիկական համակարգ-սուբյեկտի զարգացման գլոբալ գործընթացները նորովի ու յուրովի են բեկվում այնպիսի հավերժ բարոյա-բանական հարաբերությունների մեջ, ինչպիսիք են միջռասսայական, միջկրոնական, միջպետական և ազգամիջյան իրական ու «վիրտուալ» կապերն ու փոխազդեցությունները: Դրանց

հետ հակասականորեն փոխկապված արտադրա-տնտեսական ու գոյապահպանական հիմնախնդիրները, ամենատարբեր մակարդակների գաղափարական, կրոնական, ազգային ու տնտեսական ներքին ու արտաքին հակամարտությունները ստեղծել են մի իրավիճակ, երբ յուրովի առաջին պլան են մղվել էթնոմշակութային ինքնատիպության պահպանման հիմնահարցերը, որպես գլոբալ հակասությունների լուծմանը նպաստող կարևորագույն ժամանակակից գործոն:

Մարդկության գոյատևմանն ու մարդկայնության հավերժությանը սպառնացող ներկա համամոլորակային այնպիսի մտահոգությունները, ինչպիսիք են՝ «գլոբալ տաքացումն ու օզոնային շերտի անվտանգությունը», «օդի աղտոտվածությունը», «միջուկային ձմեռը», «բնական ու արհեստական համավարակների անհսկելիությունը», «ինքնաոչնչացման իրական հնարավորությունների պայմաններում պետությունների ու հանրությունների օբյեկտիվորեն անհրաժեշտ հանդուրժողականության ու փոխգործակցության անհամատեղելիությունը առկա զավթողականության ու գերիշխանության իրողությունների հետ» և այլն, օբյեկտիվորեն ստիպում են ավելի գործնական ուշադրություն բևեռել «նախագիտական» ու «նախապետական» բարոյա-իմաստային որոշակի հիմնահարցերի վրա: Մասնավորաբար արդիական ու հրատապ են դառնում այնպիսի դիալեկտիկական երևույթների միջև հակասությունների նորովի վերլուծության ու դրանց վերացման ուղիների հայտնաբերման խնդիրները, ինչպիսիք են՝ գիտության (մշակույթի) և հավատի(կրոնի), անցողիկի ու հավերժի, անհատական ու հանրային գոյության, երկրային կյանքի հետ կյանքի իմաստի ներդաշնակեցումը[1]:

---

[1] Տե՛ս օրինակ՝ **Զաքարյան Ս.,** Փիլիսոփայության պատմություն, Եր., Նոյյան տապան, 2005, մաս առաջին, Գլուխ 1. Հին Արևելքի փիլիսոփայություն, էջ 13-31; **Կյուրեղյան Է.**, Փիլիսոփայություն/Դասախոսությունների համառոտագիր/: Եր., 1995, Արևելյան փիլիսոփայություն, էջ 139-178, «Քրիստոս Ավետաբերը», էջ 178-183; **Սելյե Հ.**, Ստրեսս առանց դիստրեսաի, Եր., 1983, էջ 93-126; **Костюченко В.С.**, Вивекананда, Изд.“Мысль”, М. 1977; **Вейнингер О.,** Пол и характер, М., “ТЕРРА-“TERRA”, 1992, гл. 4: Дарование и гениальность, էջ 108-119; гл. 8, Проблема “Я” и гениальность, էջ 172-192; **Костецкий С,**. Мир, М. 2011, Раздел 3. Смерть (Мир после смерти),էջ 91-112 և այլն

Որպես նախորդ մեր աշխատանքների օրգանական շարունակություն[1], ներկա հոդվածում փորձ է արվում մարդկության ինքնազարգացման դեղուկտիվ տրամաբանության մեջ դիտարկել էթնոմշակութային ինքնատիպության՝ մասնավորաբար հայկականի ձևավորման ու զարգացման օրինաչափությունն ու անվերացնելիությունը: Ըստ այդմ ազգային կենսակերպն ու ազգակենտրոն աշխարհայացքը դիտարկվում է որպես բազմազգ ու բազմակրոն կենսակերպի ոչ թե խոչընդոտ, այլ անհրաժեշտ փոխլրացում՝ ինչպես ազգային պետությունում ու սոցիալական միաջավայրում, այնպես էլ բազմազգ ու բազմակրոն պետությունների ու քաղաքակրթությունների ներսում հանրային ու անհատական կյանքի ներդաշնակեցման գործընթացների մեջ:

Սույն հոդվածի նպատակի համատեքստում ժամանակավորապես վերանանք այն գլոբալ ու մասնավոր հիմնահարցերից, որոնք հարուցվում են մարդկության տարբեր հանրույթների, պետությունների, քաղաքակրթությունների բարդ ու հակասական հարաբերություններից, դրանց վրա ազդող բազմաբնույթ ու բազմամակարդակ գործոններից ու աշխարհաճանաչողությունը դիտարկենք որպես բանականության տիեզերական, ինքնաբավ երևույթ: Այն, ինչը «թույլ է տալիս» գիտափիլիսոփայական աշխարհայացքը: Այս դեպքում կարող ենք ասել, որ հատկապես վերջին դարում «քառաչափ աշխարհի» մեջ ճանաչողության ձեռքբերումները ըստ խորության /միջուկային ֆիզիկա/ և լայնության/ տիեզերագիտություն/, երկրային կյանքի, բանականության ու

---

[1] Տե՛ս **Կյուրեղյան Է.**, Աշխարհայացքային ինքնակրթությունը՝որպես հայոց պետականության ամրապնդման գործոն. // «Փիլիսոփայությունը արդի աշխարհում»,ՅՈՒՆԵՍԿՈ-ի հռչակած Փիլիսոփայության համաշխարհային օրվա կապակցությամբ հրավիրված գիտաժողովի նյութեր, Գիրք 7, Եր., Եվրոպրինտ, 2017), էջ 166-177; **Կյուրեղյան Է.,** Հայապահպանության աշխարհայացքային գործոնների մասին. // Փիլիսոփայությունը արդի աշխարհում-ՅՈՒՆԵՍԿՈ-ի հռչակած Փիլիսոփայության համաշխարհային օրվա կապակցությամբ հրավիրված միջազգային գիտաժողովի հոդվածներ, Գիրք 9),էջ 216-230; Կյուրեղյան Է.Ա., Կիրառական սոցիոլոգիա. Դասագիրք, Եր., Ճարտարագետ, 2015, գլ. 3, 3.7-Էթնոսոցիոլոգիա, էջ 313-337:

բարոյականության կապը անկենդան աշխարհի օրինաչափություն-ների հետ[1] ավելի հավանական են դարձրել մարդու գոյության «նախատրվածության» մասին հին ու նոր աշխարհի իմաստություն-ների օրինականությունը: Տվյալ համատեքստի «ճշմարտություններից» է դառսիզմի «բացարձակ իրականության» գաղափարը՝ Դառն: Հավերժական, միասնական, անփոփոխ, անվերջ ու անսահման դառն գոյություն ունեցող ամեն ինչի հիմքն է[2]: Այդպիսին է բուդդայակա-նության «բացարձակ պատճառականության» գաղափարը[3], Պարմենի-դեսի՝ «Կեցությունը գոյություն ունի, ոչ կեցությունը գոյություն չունի» դրույթը[4], իրի առաջացման «Արիստոտելի նպատակը»[5], Լայբնիցի «Մոնադաբանությունը»[6] և այլն: Իրականության առկա ու հնարավոր /անհնար/ ամեն ինչի փոխկապվածությունը, դրա «նախատրվածու-թյունը» բացարձակի գաղափարին իմաստունների կողմից տարբեր դարաշրջաններում, տարբեր քաղաքակրթություններում որպես յուրովի զգացողություն ու բանական հիմնավորում մարդկությանը ուղեկցում է նրա գոյության ողջ ընթացքում՝ մինչ օրս: Որքան էլ որ գիտությունն իր զարմանահրաշ ձեռքբերումներով, որպես ապացուցելի ու առարկայորեն կիրառելի գիտելիքների աշխարհ ընդդիմանում է «անապացուցելիին», այդուհանդերձ, «ի հեճուկս» սեփական գլխավոր սկզբունքի, նրա առաջընթացն ու

---

[1] Վերլուծելով տիեզերագիտության ժամանակակից առավել հեղինակավոր «Մարդակենտրոն սկզբունքը>> աշխարհի ու մարդու առաջացման վերբերյալ, Մել Թոմպսոնը հանգում է այն հետևության, թե իրականության մեջ ամեն ինչ փոխկապված են այնպես, որ «նախաՏե՛սում են>> մարդու առաջացման պահանջվող պայմանները: Այլապես մեկ ուրիշ, մեր տիեզերքից տարբերվող իրականության մեջ մարդը, հետևաբար նաև մարդկությունը տարբեր հանրույթների Տեսքով /ռասաներ, ազգեր, ազգություններ և այլն/ չէր առաջանա /Այս մասին մանրամասն տե՛ս **Томпсон М.**, Философия науки, М., 2003, էջ 244-263/:

[2] **Զաքարյան Ս.**, Փիլիսոփայության պատմություն, Եր., 2005, էջ 20:

[3] Նույն տեղում, էջ 24:

[4] Նույն տեղում, էջ 42:

[5] Նույն տեղում, էջ 78:

[6] Լեյբնիցը ողջ տիեզերքը դիտարկում էր որպես մի մեխանիզմ, որի որևէ կետում փոփոխությունը առաջ է բերում փոփոխություն մնացած ամեն ինչում՝ **Томпсон М**. նույն աշխ. էջ 258:

ինքնազարգացումը համառորեն ավելի է շեշտադրում ապացուցելիի /գիտելիքի/ ու անապացուցելիի /հավատի/ միջև հնարավոր կապը:[1] Աշխարհաքաղաքական ներկա զարգացումները, ինքնաոչնչացման իրական վտանգները, մարդկության առաջադեմ գլոբալ մտածողության համար առավել արդիական են դարձնում կյանքի ու մահվան, հավատի ու գիտելիքի, օբյեկտիվի ու սուբյեկտիվի հակասական միասնականության հիմնահարցի քննարկումը, տվյալ հակասականության հաղթահարումը՝ ի նպաստ մարդկայնության ու բացարձակ բարոյականության: Այն առավել հրատապ է դառնում աշխարհաճանաչողության ձեռքբերումների հետ վերջին տասնամյակների ցեղասպանությունների, հակամարդկային խտրականությունների, քաղաքական ու քաղաքացիական անազատությունների, բռնակալական միտումների ֆոնին:

Վերոնշյալի համատեքստում աշխարհայացքային իմաստով արդարացված ենք համարում բացարձակ և հարաբերական իրականությունների դիալեկտիկական հակասականության վերլուծությունը, աշխարհաճանաչողության մակարդակում հավատի, գիտության և արվեստի միասնականության քննարկումը, դրա օգնությամբ կյանքի իմաստի, մահվան «հաղթահարման» և՝ նրանում ազգայինի դերի հարցադրումները: Ըստ որում, բացարձակ» եզրույթը օգտագործվում է որպես տիեզերական իրականության իդեալ այն իմաստով, ինչ իմաստով ֆիզիկայում օգտագործվում են «Իդեալական գազ»,

---

[1] Նախորդ մեր աշխատանքում, որպես հիմնավորում բերված են ճանաչողության տարբեր ոլորտներից օրինակներ: Մասնավորաբար՝ քրիստոնեական պատվիրանի վերաձևակերպված իմաստի /«Արժանացիր մերձավորիդ սիրուն»/ ու մարդու ֆիզիկական ու ֆիզիոլոգիական առողջության միջև առկա դրական կապի հիմնավորումը հոգեֆիզիոլոգ Հանս Սելյեյի կողմից; հանուն ճշմարտության սուբյեկտիվ զգացողության /ի հակառակ օբյեկտիվի/ մարդու ինքնազոհաբերման /Սոկրատես, Բրունո/ սուբյեկտիվ իրավունքի հիմնավորումն ու արդարացումը Կառլ Յասպերսի կողմից; զուտ սուբյեկտիվ զգացողությամբ/ի հակադրություն գիտականի/ բացարձակ իրականության մատչելիության հիմնավորումը Ալբերտ Էյնշտեյնի հետ հայտնի զրույցում՝ Ռաբինդրանաթ Տագորի կողմից և այլն./ Այս ամենի մասին ավելի մանրամասն տե՛ս **Կյուրեղյան Է.,** Հայապահպանության աշխարհայացքային գործոնների մասին // «Փիլիսոփայությունը արդի աշխարհում», գ. 9, էջ 225-228:

«Բացարձակ պինդ մարմին», քաղաքագիտության մեջ՝ «Իդեալական պետություն», կիբեռնետիկայում՝ «Իդեալական համակարգ» և այլ եզրույթները:

Տվյալ համատեքստում աշխարհաճանաչողությունը դիտարկվում է որպես «անկրկնելիության» և «նույնության» դիալեկտիկական միասնություն:[1] Ի տարբերություն գիտական աշխարհաճանաչողության, որտեղ գլխավոր պահանջը երևույթների ու իրերի կապի առարկայացումն է ու ապացուցելիությունը, այստեղ հավասարապես կարևոր է դառնում անհատական զգացողությունն ու համոզմունքը: Աշխարհզգացողության որոշակի մակարդակում անձնավորության մեջ անկրկնելիորեն հաղթահարվում են գիտական գիտելիքի, կերպարային մտածողության արդյունքների ու գոյության անառարկելի անվերացնելիության մասին համոզմունքի միջև հակասականությունը: Եթե պայմանականորեն ընդունենք, որ «նույնությունը» արտացոլվում է հավատի, «կրկնելիությունը»՝ գիտության, իսկ «անկրկնելիությունը» արվեստի մեջ, ապա կարող ենք ասել, որ հավատի ու գիտության ճանապարհները «խաչվում» են արվեստի մեջ:

Նման աշխարզգացողությունը կարծում ենք անհատական գիտակցությանը ավելի մատչելի ու ընդունելի է դարձնում այն իմաստությունները, որոնք, ի հայտ գալով տարբեր դարաշրջաններում, պաշտպանում են մարդու ու բնապատմական ճանապարհով օրինաչափորեն ձևավորված հանրույթների արժանապատիվ գոյության ու համերաշխ համագործակցության «տիեզերական» իրավունքն ու երկրային հնարավորությունները: Այսպես օրինակ, հանրահայտ՝ «Ճանաչիր ինքդ քեզ ու դու կիմանաս ողջ աշխարհը» ստանում է յուրովի մեկնություն: Եթե ամեն ինչ անկրկնելիությունից (տարբերությունից) բացի նաև «նույնություն է», նշանակում է «ամեն ինչի մեջ կա նաև ամեն ինչը»: Դա վերաբերվում է նաև ինձ:

[1] Գիտենք, որ գիտության մեջ զուտ հարաբերական իմաստով են օգտագործվում տվյալ եզրույթները: Գիտական գիտելիքի մեջ գործածական են եզակի, տարբեր, մասնավոր, նման, ընդհանուր եզրույթները:

Հետևաբար՝ «ամեն ինչը կա նաև իմ մեջ»: Այդ իսկ պատճառով, եթե ես ավարտուն ճանաչեմ, հասկանամ ու զգամ ինձ, կիմանամ ամեն ինչ, այսինքն՝ողջ աշխարհը[1]:

Նույն համատեքստում յուրովի է ընկալվում նաև Ալբերտ Էյնշտեյնի հետ հայտնի զրույցում Ռաբինդրանաթ Թագորի հակադարձումը, կապված առարկայական-գիտական գիտելիքի «գերագնահատման» հետ՝ ի հակադրություն անհատական աշխարհզգացողությանը[2]: Թագորը, ի հակադրություն զուտ հարաբերական գիտելիքներով սահմանափակված մարդու ու մարդկայնության ըմբռնմանը, օգտագործում է «Համապարփակ մարդու» գաղափարը: Այն յուրովի միավորում է բանականության, գեղեցիկի ու կրոնի ընկալումները, որպես մարդու հավերժական էության մարմնացում: «Գոյություն ունի բանականի ու գեղեցիկի ինչ-որ չափանիշ, որն այս աշխարհին տալիս է արժանահավատություն. հավերժական մարդու չափանիշը, որի զգացողությունները համընկնում են մեր զգացողությունների հետ…գիտությունը զբաղված է դիտարկելով այն, ինչ սահմանափակ-ված չէ առանձին անհատով. նա համարվում է անհատից դուրս ճշմարտությունների մարդկային աշխարհ: Կրոնը ըմբռնում է այդ ճշմարտությունները և հաստատում է նրանց կապերը մեր առավել խորը պահանջմունքների հետ. Ճշմարտության մեր անհատական գիտակցումը ձեռք է բերում ընդհանուր իմաստ… Կրոնը ճշմարտությունը արժեքավորում է, և մենք ըմբռնում ենք ճշմարտությունը՝ զգալով մեր ներդաշնակությունը նրա հետ», -փաստարկում է Թագորը[3]:

---

[1] Թերևս ասվածը համահունչ է նաև բուդդայական «Նիրվանա»-ի գաղափարին, որպես գիտակցաբար նվաճված «Բացարձակ հավասարակշռության» վիճակ:

[2] «Համաձայն հնդկական փիլիսոփայության,-նշում է Թագորը,- գոյություն ունի Բրահմա՝ բացարձակ ճշմարտություն, որին չի կարելի հասնել առանձին անհատի բանականությամբ կամ նկարագրել բառերով: Այն ճանաչվում է միայն անսահմանության մեջ՝անհատի ամբողջովին խորասուզման ճանապարհով: Այդպիսի ճշմարտությունը չի կարող պատկանել գիտությանը…»: Տե՛ս՝http://nowimir.ru/DATA/030041_2.htm

[3] Նույն տեղում:

Աշխարհի «միասնական նույնականությունը» հաստատող գիտափիլիսոփայական դիտարկումները ավելի շատ հաստատում, քան մերժում են տիեզերագիտության մեջ «Մեծ պայթյունի» գաղափարն ու նրա ժամանակակից զարգացումները: Ուրիշ խոսքով, ինչպես հավաստում է Մ. Թոմպսոնը, գիտության առաջացման ու ձևավորման դարաշրջանում աստղագիտության տարանջատումը աստղագուշակությունից կարծես կրում է ժամանակավոր բնույթ: Օրավուր ավելանում են ապացույցներն այն բանի, թե երկնայինն ու երկրայինը բաղկացած են նույն նյութից և մենք անկապ չենք աստղերից, մոլորակներից ու նրանցում կատարվածից: Որպես օրինակ նշվում է Նիլ Տյուրոկի և Սթիվեն Հոքինգի տեսությունը «Ինստանտոն»-ի մասին[1]: Ըստ այդ տեսության» «Ինստանտոնը» կետ է, որը ներառում է տարածությունը, ժամանակը, նյութն ու ձգողությունը: Այն ապրում է միայն ակնթարթ, սակայն ի զորու է բաց թողնել մի մեխանիզմ, որը ծնում է անսահման Տիեզերքը»[2]: Աստղագուշակների այն պնդումները, թե գոյություն ունեն խորհրդավոր ուժեր, որոնք ազդում են երկրային ու երկնային իրադարձությունների վրա, աշխարհաճանաչողության նոր զարգացումներում մերժելու համար պահանջում են շատ ավելի մեծ զգուշություն, քան գիտությունը իրեն թույլ է տվել ձևավորման փուլում: Ընդհանրացնելով աստղագիտության ժամանակակից նվաճումները, հնարավոր է դառնում հավաստել՝»Այժմ մենք տեսնում ենք մի գործընթացի դրսևորում, ինչը միաժամանակ կախարդում է (հմայում է) և վախեցնում: Գիշերը երկնքին նայելով, մենք գիտակցում ենք, որ այդ ամենի մասն ենք՝ ամենաբառացի իմաստով»[3]:

Նման մեկնակետից հրվելով, կարող ենք ասել, որ երբ քառաչափ աշխարհի առաջացման մեխանիզմը բաց է թողնված ու նրա ընթացքը բանական փաստ է, այլևս հավերժ գործում է «անկրկնելիություն-նույնություն» դիալեկտիկական կապը: Այն, ինչը զարգացման

---

[1] **Хокинг С.**, От Большого взрыва до черных дыр. М., Мир, 1990.

[2] Մեջբերված է՝ **Томпсон М.,** Философия науки, М., 2003 գրքից, էջ 251:

[3] Նույն տեղում, էջ 264:

որոշակի փուլում առաջացնում է նաև Արեգակնային համակարգությունը՝ Երկիր մոլորակի վրա կյանքի ու մարդու-մարդկության առաջացման լիարժեք պայմաններով: Մեզ համար կարևորն այն է, որ մարդու ու հանրության դիտարկումը, որպես աշխարհայացքային եզրույթ չի հակասում զուտ գիտական մոտեցմանը, կապված էթնոմշակութային հանրույթների առաջացման ու զարգացման հետ[1]: Ի լրումն գիտականի, նման մոտեցումը թույլ է տալիս մարդուն, ազգերին, էթնո-ռասսա-մշակութային հանրույթներին դիտարկել որպես տիեզերքի համընդհանուր գոյությամբ ու զարգացմամբ պայմանավորված ինքնազարգացող ու ինքնակառավարվող «սուբյեկտներ», որոնք դիալեկտիկական կապի մեջ են մարդկության, որպես միասնական «սուբյեկտի» հետ: «Սուբյեկտ», որն իր հերթին է դիալեկտիկական կապի մեջ կենդանական աշխարհի, երկրային բնության, մոլորակային համակարգերի ու «մեգաաշխարհի» հետ:

Ինչպիսին էլ լինի ազգի սահմանումը,[2] այն չի կարող դուրս գալ անհատի ու հանրույթի գոյության տիեզերական պլանից, այն է՝ վերարտադրություն, հաղորդակցում, պաշտպանություն-արարում, կառավարում-ինքնակառավարում, արդյունքում՝ ինքնաարարում: Եթե «անկրկնելիությունը» անհատական ու խմբային բանական գոյության մակարդակում դրսևորվում է որպես ազատության, անկախության ձգտում[3], ապա «նույնությունը», որպես նրա դիալեկտիկական հակադրություն, մարմնավորում է կապվածությունը, ընդհանրությունը, պատասխանատվությունը, նվիրվածությունը, ի վերջո այն, ինչն ի լրումն փոփոխական ու պայմանական բարոյականության կոչվում է «բարոյականության

---

[1] Տե՛ս՝ **Կյուրեղյան Է,** Աշխարհայացքային ինքնակրթությունը…,ԳԻՐՔ YII, 167-170

[2] Ազգ հասկացության տարբեր սահմանումների մասին Տե՛ս, օրինակ՝ http://ponjatija.ru/taxonomy/term/17

[3] «Այն ամենը, ինչ տեսնում ենք մեր շուրջը, ձգտում է ազատության՝ ատոմից մինչև մարդ, մատերիայի անզգա, անկենդան մասնիկից մինչև բարձրագույն էակը երկրագնդի վրա, մինչև մարդկային հոգին: Բոլոր կապակցություններում յուրաքանչյուր մասնիկ /ԻՄԱ-անհատ, հանրույթ/ փորձում է գնալ իր ուղիով, պոկվել մյուս մասնիկներից: Բայց վերջիններս պահում են նրան…» տե՛ս https://libking.ru/books/religion-hinduism/561491-23-svami-vivekananda-karma-yoga.html#book, էջ 23

նախատրվածություն, կամ՝ բացարձակ բարոյականություն»: Փոխբացառող միասնության մեջ գտնվող այդ հակադրությունների պայքարում, երկրային կյանքում օրինաչափորեն առաջանում են աշխարհաճանաչողություն-արարում-աշխատանքը, հավատը, լեզուն, ընտանիքը, էթնոմշակութային ինքնատիպությունը, ազգը, համատեղ կյանքի կառավարման զարգացող ձևերը: Նման շեշտադրությունը կարևորում ենք այնքանով, որքանով այն հակադրվում է լեզվի ու ազգային ինքնատիպության զուտ հարաբերական ու անցողիկ գոյության, ֆիզիկական ու ռազմական ուժի դերը սույն հարցում գերագնահատողների տեսակետին[1]: Մոտակա իսկ քննարկումը վկայում է, որ լեզուն, էթնոմշակութային ինքնատիպությունն ու բանական գոյության ժառանգականությունը ոչ պակաս չափով նաև արարման ու ինքնաարարման ուղիով «տիեզերական պլանի» իրացման օրինաչափ դրսևորումներ են, այլ ոչ զուտ երկրային կյանքին հարմարվելու ու հեշտությամբ փոխարինվելու գործիք: Ազգային լեզուներն ու ժառանգված վերարտադրվող արարչագործությունը նաև տիեզերական բարեշրջման արդյունք են, երկրային կյանքի հետ տիեզերական գոյության կապի դրսևորում, մարմնական գոյության մարտավարության կողքին, նաև՝ տիեզերական գոյության ռազմավարություն: Ազգային լեզվի ու նրա զարգացման առարկայական ու անհատական հնարավորությունների մեջ խտացված կերպով արտացոլված են ոչ միայն արտաքին ու ներքին բնական ու արհեստական խոչընդոտներին դիմակայելու միջոց-գիտելիքները[2], այլև տիեզերական գոյության հետ մարմնական ու հոգևոր գոյության կապը որոշակի, շատ դեպքերում անկրկնելի ապրումների ու հույզերի տեսքով: Ապրումներ ու հույզեր, որոնց հետ լիարժեք հաղորդակցումը հնարավոր է միայն էթնոմշակութային

---

[1] Այս մասին տե՛ս **Կյուրեղյան Է.** աշխարհայացքային գործոնների մասին // «Փիլիսոփայությունը արդի աշխարհում», գ. 9, էջ 223-225:

[2] Այն, ինչի կարևորությունը դույզն իսկ չի թերագնահատվում մեր կողմից:

ինքնատիպության անկրկնելի աշխարհում[1]: Լեզուն ամրագրում է արարչագործության ու ինքնաարարման արդյունքներն ու ապահովում է նրա հարատևությունը, որպես տիեզերական «վերջնանպատակ», որպես ոչնչացման /վերացման/ անխուսափելիությունը անհատապես ու անկրկնելիորեն հաղթահարող ուժ: Սույն առնչությամբ կարծում ենք համոզեցուցիչ են Ս. Կոստեցկու հիմնավորումները, կապված արարման ու մարմնական մահվան հետ: Ըստ նրա, անկախ այն բանից, թե գոյություն ունի, կամ չունի տիեզերական Արարիչ, մարդն ու մարդկությունը, որպես որոշակի պայմաններում բանական գոյության փաստ, ստիպված են ու պարտավոր են ենթարկվել համատեղ գոյության որոշակի պայմանավորվածություններին: Հանուն ընդհանուր գոյության ու ներդաշնակության, բոլորը՝ ինչպես կառավարողները, այնպես էլ կառավարվողները պարտավոր են ենթարկվել այն կարգ ու կանոնին, նորմերին, որոնք, զարգացման ու կատարելագործման մեջ ապահովում են անձանց և հանրույթների անվնաս գոյությունը: Առավել ևս դա վերաբերվում է այն դեպքին, երբ ընդունվում է հոգու, Լույսի, Արարիչի և ընդհանուր Արարման գոյությունը: Ինչ վերաբերում է հետմահու աշխարհին՝ «Ինչպես ֆիզիկական, այնպես էլ սոցիալական աշխարհը անմիջական ազդեցություն ունի մահվանից հետո աշխարհի վրա,-ընդհանրացնում է Կոստեցկին: Մարդու կյանքի գոյության բոլոր պայմանները խստորեն տարանջատված են ու սահմանազատված, միաժամանակ կոշտ կերպով փոխկապված են ու սերտորեն փոխազդում են: Այդ պատճառով Արարել պետք է Բոլորին, Ամենուր և Միշտ՝ ֆիզիկական աշխարհում՝Բնության հանդեպ,

---

[1] Ասվածը լավագույնս է արտացոլված **Հ. Թումանյանի** փիլիսոփայական քառյակներում,կապված հայոց էթնոմշակութային ինքնատիպության հետ, մասնավորաբար՝
Բարձր է հնոց, աշխարհքն Հայոց ու Մասիսը երկնադետ,
Իմ խոր հոգին էն բարձունքին խոսք է բացել նրա հետ
Անհաս բանից, սկզբանից, երբ չկան էլ դեռ չկար,
Մինչև վախճանն անվախճանի քննում է դարե դար
/Տե՛ս https://granish.org/hovhannes-tumanyan//

սոցիալական աշխարհում՝հանրային կյանքի հանդեպ»[1] : Եվ այս համատեքստում տարբեր լեզուներն ու մշակույթները, որպես մարդկության տիեզերական ու երկրային հույզերի, ապրումների գունապնակ առավելապես փոխլրացնում են միմյանց ու գրեթե երբեք չեն փոխբացառում: Եթե ուշադիր զննվի, կնկատենք, որ բնապատ-մական օրինաչափ ճանապարհով ձևավորված որևէ լեզու ոչնչացված չէ: Այն, աշխարհաքաղաքական, միջպետական ու ներպետական տարբեր զարգացումներում կարող է ավել կամ պակաս «դիֆուզվել» հարակից կամ տիրապետող լեզուների մեջ, դրսևորվել, օգտագործվել «քողարկված» կերպով, արգելվել ժամանակավորապես որոշակի պաշտոնական միջավայրերում, օրենքներում, սակայն իսպառ այն վերացնելն անհնար է: Քանզի աշխարհաճանաչողության արդյունք է ու գործածվում է նաև կենցաղում, ոչ պաշտոնական միջավայրում, եթե կարել է ասել, նաև՝»տիեզերքի թելադրանքով»:

Լեզվի կողքին, նաև նրա միջոցով, ինքնատիպության մյուս անփոխարինելի ոլորտը ազգային արվեստն է: Որպես աշխարհաճանաչողության ձև, պատկերային մտածողություն ու աշխարհզգացողություն, արվեստը մի կողմից փոխլրացնում է գիտական գիտելիքին և իր աշխարհընկալման տարբեր տեսակներով ունի համամարդկային նշանակություն՝ թե՛ ընդհանրական, և թե՛ նույնականության համատեքստում: Իսկ որպես անհատականության ու ինքնատիպության դրսևորում նրա նշանակությունը անձնական է ու էթնոմշակութային՝ անկրկնելության համատեքստում: Տիեզերա-կան իր վերոնշյալ նշանակությամբ արվեստը կամուրջ է գիտության ու հավատի/կրոնի/ միջև: Մեծ իմաստով անկրկնելիորեն ու ինքնատիպորեն, տարբեր եղանակներով արտացոլելով բնական ու բանական իրականությունը, մարդու ու հանրույթի հոգևոր ներ-աշխարհը, դրանց տիեզերական փոխկապվածությունը, արվեստը «շոշափում է» է նաև այնպիսի ճշմարտություններ, որոնք բնորոշ են

[1] Հանրային կյանքը հեղինակը սահմանում ու հիմնավորում է որպես «մրջնանոց»: Տե՛ս **Костецкий С.** Мир, М. 2011, էջ 111

հավատին՝ Արարչագործություն, Արարիչի գոյություն, անմահություն, ամենազորություն, ինքնազոհաբերում, բացարձակ նվիրվածություն-Սեր և այլն: Մյուս կողմից մարդկային բանականությունն ու բարոյականությունը թույլ են տալիս այդ ամենը վերլուծել անհրաժեշտության ու համընդհանրության, կրկնելիի ու ապացուցելիի տիրույթում, ինչն արդեն գիտական ճանաչողության գերակայությունն է /Արվեստագիտությունը իր բազմաթիվ ճյուղերով/: Արվեստի նման «առաքելականությունը» ապացուցելի ու հավատալի է դարձնում նաև ազգային արվեստների նշանակալիությունն ու անվերացնելիությունը, որպես գիտության ու կրոնի փոխկապվածության մասնավոր դեպքեր, մարդկության գոյության տիեզերական իմաստի յուրովի արտահայտություն, մարդկության ու մշակույթների «գունապնակի երանգներ»: Մարդու ու մարդկության կյանքում արվեստի մեջ լավագույնս է արտացոլվում գիտելիքի ու հավատի, երկրայինի ու երկնայինի, պաշտոնականի ու ոչ պաշտոնականի, ազատության և պատասխանատվության միջև հակասականության հաղթահարումը, նրանց միջև «հանդուրժողականության, հաշտության, փոխլրացման ու փոխգործակցության» իրացումը: Իհարկե, անհատական կամ խմբային մակարդակում տվյալ հակասականությունը յուրովի պահպանվում է, հարուցելով բազմաթիվ խոչընդոտներ հանրային հաշտության առջև: Այն հավանաբար ուղեկցելու է մարդկությանը այնքան ժամանակ, քանի դեռ յուրաքանչյուր անձի, ընտանիքի ու ազգության համար երկրային նվաճված բարեկեցիկ կյանքը չի ներդաշնակվել գիտակցված հավատքի, «տիեզերական կյանքի իրական զգացողության» հետ: Սակայն մարդկության կենսափորձը միաժամանակ սույն հարցում ամրագրում է առաջընթաց՝ առաջին հերթին իմաստուն անհատների ինքնազոհաբերման, կամ տառապալից ինքնահաղթահարման շնորհիվ:[1] Նման դեպքերը, անկախ քանակությունից յուրովի հույս են,

[1] Մարդկությունը լավ է հիշում գիտության ու հավատի միջև հակամարտության ողբերգական ժամանակները, ինչի դասական արտահայտություններից է Ջորդանո

«լույսի շող թունելի վերջում» այն հոգիների համար, որոնք կամ «ժառանգել են», կամ երկրային կյանքի տառապանքների գնով հասցրել են տիեզերական նույնության զգացումը դարձնել մտորումների ու արարքների շարժառիթ:

Ազգային ու համամարդկային արժեքների նվազագույն անհրաժեշտ տիրապետումը կրթության ու ինքնակրթության օգնությամբ, անհատապես տիեզերական մտածողության ձեռքբերումը հավատի, գիտելիքի ու արվեստի փոխլրացնելի միասնությունը գիտակցելու-զգալու միջոցով, թերևս այն միակ ճանապարհն է, որը մարդկանց հավասարեցնում է անկրկնելիորեն նույնությունը զգալու տեսանկյունից: Այստեղ վերանում են այն տարբերությունները մարդկանց միջև, որոնք առաջացել են սոցիալական կարգավիճակների տարբերությամբ և պաշտոնական ու ոչ պաշտոնական /նաև դեվիանտ/ ստիպողականության ու խտրականության ձեռքբերմամբ: Ցանկացած քաղաքացի, յուրաքանչյուր աշխատող՝ տնօրեն թե բանվոր, նախարար թե հավաքարար, նախագահ թե պահակ, ենթակա թե ղեկավար նույն մարդկային իրավունքն ունեն մտածելու կյանքի իմաստի, համատեղ կյանքում սեփական դերի ու անհատապես սեփական կյանքն ու մահը տնօրինելու հարցում: Ավելին, տիեզերական նույնականությունը զգալու ու սեփական կենսակերպի

Բրունոյի նկարագիրն ու ճակատագիրը, և ինչի, որպես երևույթի յուրովի, մասնակի ու ժամանակակից կրկնությունները առանձին սոցիումների շրջանակում դեռևս շարունակվում են: Երևույթի դասական մեկնություններից է Կառլ Յասպերսի կողմից Բրունոյի արարքի հիմնավորումը, ինչը մեր քննարկման համատեքստում թերևս անվանենք «նույնության անկրկնելի» դրսևորում. «Մեռնել այն ճշմարիտի համար, ինչը կարող է ապացուցվել, արդարացի չէ: Սակայն այն մտածողը, ով ենթադրում է, թե թափանցել է իրերի հիմքի մեջ և ի վիճակի չէ հրաժարվելու սեփական ուսմունքից, դրանով չվնասելով ճշմարտությանը՝ իր գաղտնիքին է: Չկա ընդհանուր այնպիսի կարծիք, որը կարողանար իրենից պահանջեր ընդունելու տանջալից թագը (мученический венец): Միայն այն, որ, Բրունոյի նման ինքը դա ընդունում է ոչ թե երազկոտ խանդավառությունից, կամ պահի տակ ծնված համառությունից ելնելով, այլ սեփական դիմադրությունը տնականորեն հաղթահարելուց հետո՝ իրական հավատի, ճշմարտության մեջ վստահության ցուցանիշ է, որը ես չեմ կարող ապացուցել այնպես, ինչպես վերջավոր առարկաների ճանաչողության դեպքում»: Տե՛ս **Ясперс К.** Смысл и назначение истории, М., 1991, էջ 422:

մեջ այն իրապես հաշվի առնելու տեսանկյունից ցանկացած «ենթակա» ի զորու է գերազանցելու «ցանկացած» ղեկավարի: Եթե հանճարեղությունը, ի տարբերություն որոշակի ոլորտում տաղանդի, վերագրվի մարդու համապարփակությանը, բազմակողմանիությանը, սեփական ըմբռնման մեջ հնարավորինս առավել շատ մարդ տեղավորելու կարողությանը, թերևս իմաստավորված կհամարենք այն մոտեցումը, ըստ որի «բոլոր մարդիկ հանճարեղ են տարբեր չափով»: Սույն իմաստով ավելի շատ ընդունելի, քան մերժելի է հանճարեղության «տարօրինակ» թվացող սահմանումը Օտտո Վեյնինգերի կողմից՝ հանճարեղն այն մարդն է, ով ամեն ինչ գիտի, ոչինչ չուսումնասիրելով: Ըստ որում, «ոչինչ» ասելով հեղինակը նկատի ունի ոչ թե ապացուցված գիտելիքը, տեսությունը, համակարգը, այլ առանց դրա իրերի /մարդու/ ամբողջական պատկերն ու նրա հանդեպ վերաբերմունքը մշակելու շնորհքը: Նկարիչը կարող է ամպամած կամ պայծառ երկընքում ջրի գույնը ճանաչել առանց օպտիկան ուսումնասիրելու[1]: Դա այն է, ինչն առավելապես բնատուր է ու կարող է մատչելի լինի ցանկացած սոցիալական կարգավիճակ ունեցողի: Միաժամանակ այն է, ինչն իրավունք է տալիս անձնական լիարժեքություն զգալ ու այն պահանջել սոցիալական միջավայրից:

Նման իրավունքի ցանկացած ուղղակի կամ անուղղակի խոչընդոտումը, գիտակցաբար թե ենթագիտակցորեն ընկալվում է որպես արժանապատվության ոտնահարում, անձնական լիարժեքության վնասում, դրանից բխող հանրայնորեն վնասակար հետևանքներով: Սա մի երևույթ է, որը ժամանակակից աշխատանքի սոցիոլոգիայի առաջնահերթություններից է, ակտիվ ու արդյունավետ աշխատանքի գլխավոր խթան-շարժառիթներից:[2] Երևույթի մանրամասն քննարկումը ներկա աշխատանքի խնդիրը չէ: Սակայն

---

[1] Տե՛ս **Вейнингер О.** Пол и характер, М., 1992, էջ 111-117: Երևույթը յուրովի նույն կերպ է գնահատում Վիվեքանանդան՝ Քարմա-Յոգա-յում. https://libking.ru/books/religion-hinduism/561491-23-svami-vivekananda-karma-yoga.html#book, էջ 12-15

[2] Տե՛ս օրինակ՝ **Կյուրեղյան Է.** Կիրառական սոցիոլոգիա, Եր.,2015, գ. 3, 3.2; 3.3; **Կյուրեղյան Է, Շամիրյան Վ, Քոլյան Լ,** Գործարար հաղորդակցում, Եր. 2013, էջ 5-9:

մատնանշումը կարևորում ենք ազգապահպանության տեսանկյունից: Քանզի այն պաշտպանում է ազգի յուրաքանչյուր ներկայացուցչի արժանապատվությունը, սոցիալական միջավայրում լիարժեք անհատ զգալու ցանկությունը՝ անկախ որևէ պայմանականությունից, սոցիալական կարգավիճակից, նյութա-ֆինանսական հնարավորություններից, ենթարկեցնելու ուժային ռեսուրսներից: Միաժամանակ տվյալ լիարժեքությունը համազգային գիտակցական միասնականության գլխավոր հիմքն է: Ասվածին համահունչ ենք համարում հնդիկ մեծ մտածողի համոզմունքը, կապված ազգա-պետական անկախության ու էթնոմշակութային ինքնատիպության պահպանման հետ՝ «Քարոզեք ինչքան ուզում եք բոլոր տեսակի իրավունքների ու արտոնությունների համար, սակայն հիշեք, որ քանի դեռ ինքներդ չեք վեհացել, ազգի մեջ արթնացնելով ինքնահարգանքի խորը զգացումը, որևէ մեկից իրավունք ու արտոնություններ ստանալու ձեր հույսերը երազ են՝ օրը ցերեկով»[1] :

Ազգապահպանության մյուս առանցքային գործոնը, համընդհանուր ընդունված ու գրեթե անքննելի՝ պետականության կողքին, կայուն ու միասնական ընտանեկան հարաբերություններն են: Յուրովի այն վերաբերում է թե՛ բազմազգ սոցիալական իրականությանը, և թե՛՝ ազգությամբ ոչ միատարր ընտանիքներին: Երևույթը թերևս հանրագիտության մեջ ամենաուսումնասիրվածներից է[2]: Ի լրումն գիտականի, աշխարհաճանաչողության տեսանկյունից ընտանիքը ունի նաև «տիեզերական առաքելություն»: Եթե երկրային կյանքում, ընտանիքի ձևավորման խնդրում, այս կամ այն կերպ հասկանալի ու ընդունելի են որոշակի շահադիտական շարժառիթները, որպես փոխադարձ համակրանքի, ամուսնության գործոններ, ապա այն ավելի շատ խոչընդոտ է ու հակասության մեջ է մտնում սիրո տիեզերական զգացումի հետ: Այստեղ գործ ունենք նույնության

---

[1] Տե՛ս՝ **Костюченко В.С.,** Вивекананда, М., 1977, էջ՝ 182

[2] Մանրամասն տե՛ս, օրինակ՝ Կյուրեղյան Է. Կիրառական…ԳԼՈՒԽ 3, 3.4., Ընտանիքի սոցիոլոգիա:

զգացողությանը նպաստելու կամ չնպաստելու հետ: Իսկ նման զգացողությունը, որպես իդեալականություն ենթադրում է բացարձակ անշահախնդրություն, նվիրվածություն ու անպայմանականություն:[1] Որքան ներընտանեկան բազմաբնույթ հարաբերություններում տվյալ որակների դրսևորման մակարդակը բարձր է, այնքան ինքնաշխատ կերպով բազմակողմանի աշխարհաճանաչողությունը՝ ինքնակրթության ու ինքնակատարելագործման տեսքով դառնում են անհատական ու խմբային առաջնահերթություն: Իսկ դա այն է, ինչ անհրաժեշտ է անհատապես ու ընտանյոք հանդերձ, բնականորեն ու անբռնազբոս կերպով ձգտել հաղորդակից դառնալ գիտության, արվեստի/հատկապես ազգային/ ու հավատի/հատկապես ազգային կրոնի/ էություններին, նրանց միջև հնարավոր կապերին: Ուրիշ խոսքով՝ սեփական կենցաղն ու սոցիալական կյանքը, աշխատանքը ներդաշնակեցնել ազգային իդեալի, կյանքի տիեզերական իմաստի ըմբռնման հետ:

Հարկ է նշել, որ ընտանեկան մեկուսությունն ու սահմանափակությունը աշխարհաճանաչողության մեջ հաղթահարելու հարցում ազգայնորեն միատարր ու խառը ընտանիքները՝ ազգային ու բազմազգ պետական կյանքում ունեն յուրահատկություններ: Դրանց մանրամասն քննարկումը ներկա հոդվածի խնդիրը չէ: Զուտ որպես օրինակ նշենք, որ, ենթադրաբար, եթե միատարր ազգապետական ընտանիքում ավելի ուժեղ է նվիրվածության, ենթագիտակցական նույնության ու անփոխարինելիության զգացումները, ապա «խառը» ընտանիքներում ու բազմազգ սոցիումում՝ ընդհանրական հավատի զգացողությունը, կենցաղային ու ժառանգական որակների հակասություններում ներողամտությունն ու փոխարինելիությունը:

---

[1] Որպես մասնավոր օրինակ լավագույնս է այն արտահայտել Կոնֆիցիոսը /նախնիների, ընտանիքի պաշտամունքը Չինաստանում, որպես առաջնահերթություն՝հանրահայտ է/՝ »Մի իշխան, կոնֆուցիոսի հետ զրուցելիս ասում է՝ «Այստեղ մարդիկ շատ արդարամիտ են: Որդին անգամ հայտնում է հոր կատարած գողության մասին»: Կոնֆիցիոսը պատասխանում է. «Մեզ մոտ ուրիշ է: Մեզ մոտ հայրը թաքցնում է որդուն, իսկ որդին թաքցնում է հորը: Դրա մեջ է արդարամտությունը»: Մեջբերված է՝ **Զաքարյան Ս.** Փիլիսոփայության պատմություն գրքից, էջ 19:

Վերոնշյալը թույլ է տալիս խնդրո առարկայի տեսանկյունից յուրովի մոտենալ հայապահպանության, արդիական հիմնահարցին:[1] Դա առնչվում է հայության յուրահատուկ պատմության, յուրօրինակ ներկայի ու դրա հանդեպ վերաբերմունքի հետ: Աշխարհաճանաչողության տեսանկյունից հայապահպանության հանդեպ դրական դիրքորոշումը խթանելու համար, ընդհանրական տեսքով ներկայացնենք պատմագիտական, աշխարհայացքային և արվեստագիտական երեք առանցքային ուսումնասիրությունների փոխկապակցված արդյունքները[2].

-Հայության ու հայկականության հետ եվրոպական երկրների ու ժողովուրդների (մասնավորաբար՝ Գերմանիայի, Բրիտանիայի, կելտեր-գալիացիների, բասկերի, էտրուսկների, սլավոնացիների և այլն) կապի մասին գրավոր աղբյուրների ու մասնագիտական հետազոտությունների արդյունքների համադրումը վկայում է, որ Հայաստանը հնդեվրոպացիների՝ արիական ցեղերի նախահայրենիքն է և ժամանակակից քաղաքակրթության օրրանը:

-Հայկական բարձրավանդակում հազարամյակներից ի վեր, որպես ամբողջություն հայ մշակույթը ծավալել է իր ներքին կարողությունները և հասարակական կյանքի կազմակերպման համազգային ձևերը քաղաքակրթության տարբեր դարաշրջաններում՝ հավաստելով իր կրող ժողովրդի անընդմեջ գոյությունը իր հայրենիքում;

- Տարբեր պատճառներով նախահայրենիքից տեղաշարժված հայության տարբեր հատվածները(աշխարհաքաղաքական

---

[1] Խնդիրը օբյեկտիվորեն քննարկված է մեր մի շարք նախորդ հոդվածներում, ինչի մանրամասների վրա այստեղ կանգ չենք առնի՝ **Կյուրեղյան Է.** Աշխարհայացքային ինքնակրթությունը…ԳԻՐՔ VII, էջ 166-177; **Կյուրեղյան Է., Մարտիրոսյան Գ.,** Ներգաղթյալ հայ ձեռներեցները Լեհաստանում…ԳԻՐՔ VIII, էջ 296-313; **Կյուրեղյան Է.,** Հայապահպանության աշխարհայացքային գործոնների մասին…, ԳԻՐՔ IX, էջ 216-230. **Առաքելյան Ս., Կյուրեղյան Է., Ճաղարյան Մ.**, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հասարակական կարծիքի համապատկերում, Եր., Տիր, 2018, էջ 7-10; 66-68; 255-262 և այլն:

[2] **Теряи А.** ,Древние письменные источники народов Европы о своей прародине -Армении и армянах. Ер., Воскан Ереванци, 2016; **Գևորգյան Հ.** Փիլիսոփայություն, պատմություն, մշակույթ, Եր., 2005; Ջորջ Բայրոնը հայերի և Հայաստանի մասին. https://mediamag.am.> bayron, 16 հլս, 2012:

զարգացումներ, բռնի տեղահանություն, էթնիկական զտումներ, ապրանքափոխանակության միջոցով «մոլորակի հոգևոր յուրացում») նկատելի հետք են թողել Եվրոպայում՝ արևի երկրպագությունը, ճարտարապետությունը, մետաղի մշակումը, խեցեգործությունը, խաչքարերը, տեղանունները և այլն:

-Այս ամենը յուրովի ապացույց են նաև հայության յուրովի առաքելականության, մարդկության տիեզերական իմաստի մասնակի դրսևորման, ինչը պատկերավոր արտահայտված է Ջորջ Բայրոնի հանրահայտ կարծիքի մեջ՝ «Ես սովորել եմ հայերի լեզուն, որպեսզի հասկանամ՝ ինչ լեզվով են խոսել աստվածները, քանզի հայոց լեզուն աստվածների լեզուն է…և Հայաստանը աստվածների հայրենիք է, աստվածներն էլ ծնունդով Արարատյան դաշտից են»[1] :

Վերջին տասնամյակներում հայությունը վերապրեց սեփական ինքնատիպ տիեզերական գոյության ու առաքելության երկու առանցքային իրողություն: Մեկը սեփական պատմության, էության ու քաղաքակրթության մեջ ունեցած դերի ճշգրտումն ու վերաիմաստավորումն է, մյուսը՝ աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումների ֆոնին առաջացած արցախյան տևական հակամարտության ու երկրաշարժի պատճառով՝«նեոսփյուռքահայության» առաջացումը: Տեղահանված այս նոր հատվածի քաղաքակրթական հարմարումը գրեթե ողջ աշխարհում վկայում է, որ հայությունը չի թուլացել ու թույլ չէ՝ ոչ՛ կենսաբանորեն, ոչ՛ գենետիկորեն, և ոչ՛ էլ մշակութորեն:

Որպես վերքաղաքական ու վերդիվանագիտական իրողություն, առաջադեմ մարդկությունը թերևս մեկ քայլ առաջ է անցել հայության գոյության քաղաքակրթական նշանակությունը գիտակցաբար ընդունելու հարցում: Մյուս կողմից աշխարհաքաղաքական զարգացումները, «ի հեճուկս» բոլոր հակամարտությունների ու մարդատյացության ձգտում են քաղաքական ու քաղաքացիական ազատությունները, դրանց հարաճուն զարգացումը, որպես տիեզերական գոյության

[1] Բայրոնը մեր լեզվի ու մեր մասին: https://www.vnews.am

հետ ներդաշնակվելու առավել արդյունավետ գործոն, դարձնել անդարձելի: Այն, ինչը մարդկության մասշտաբով ժողովրդավարական առաջընթացին ու բազմազգ համերաշխ սոցիալական իրականությանը այլընտրանք չեն թողնում: Ուրիշ խոսքով, ի թիվս մյուսների, որքան մարդկությունն է պետք հայությանը, այնքան՝ հակառակը:

Վերոնշյալ իրողությունը, առարկայական հնարավորությունների կողքին, հիմնարար խնդիր է առաջադրում հայության հավաքական գիտակցությանն ու պաշտոնական կյանքին: Մի կողմից պետական արտաքին ու ներքին քաղաքականությունը, ընթացիկ ու մարտավարական խնդիրների կողքին պետք է վերահիմաստավորվի ու ռազմավարորեն համուղղվի նաև ողջ հայության համար առաքելականությանը համապատասխան կենսական պայմանների ապահովմանը: Մյուս կողմից ինքնակրթությունն ու ինքնակատարելագործումը, հավատի, գիտության ու արվեստի հանդեպ հայանպաստությունը պետք է դառնան ողջ հայության անհատական ու ընտանեկան արժեքային կողմնորոշումների առաջնահերթություններ: Սույն իմաստով նորովի իմաստ է ստանում «Առաջ, դեպի մեր արմատները» կարգախոսը: Խնդրո առարկայի համատեքստում դա նշանակում է նախաքրիստոնեական ու հետքրիստոնեական հայության պատմության ներդաշնակեցում, գերդաստանի, գիտության ու արվեստի (գիտնականի ու արվեստագետի)՝ դիրքերից բարոյականության(կարելի-չի կարելի), խղճի նորովի վերահիմաստավորում, արարչագործական աշխատանքի բնականության ու առաջնահերթության վերագտնում: Աշխարհաճանաչողությունը հիմնավորում է, որ հայ անհատի կողմից խղճի, կարեկցանքի, հանդուրժողականության, բարեխիղճ աշխատանքի, արարումի ինքնամղման, ցանկացած իրականության մեջ մարդասիրության ու ինքնազոհաբերման, տվյալ սոցիումի օրենքը, կարգն ու հավատը հարգելը, պաշտոնապես հաստատված օրենքները չխախտելը և նման այլ որակները «շնորհված են ի վերուստ», և՝ հոգևոր ինքնափրկության ու մարմնական մահը ստորադասելու ամենակարճ ուղին են:

ԱՄՓՈՓՈՒՄ

Գիտության, մշակույթի ու հավատի փոխկապակցվածության ժամանակակից պատկերացումների համատեքստում հոդվածում դիտարկվում է մարդկության ինքնազարգացման մեջ ազգայինի, էթնոմշակութային ինքնատիպության առաջնակարգ նշանակությունը: Քննարկվում է մարդկության, որպես սուբյեկտի դիալեկտիկական կապը նրա միասնականությունը պայմանավորող այնպիսի ենթասուբյեկտների հետ, ինչպիսիք են տարբեր ու փոխլրացնող էթնոմշակութային միավորները: Ըստ այդմ, սոցիալ-փիլիսոփայական տեսանկյունից վերլուծվում են պետության, ընտանիքի, լեզվի ու աշխատանքի այն իմաստն ու իդեալները, որոնք ռազմավարորեն նպաստում են մարդկության ու ազգերի ներդաշնակ փոխգործակցությանն ու արտաքին իրականության խոչընդոտներին արդյունավետ դիմակայությանը: Տվյալ ընդհանուր օրինաչափության համատեքստում քննարկվում է հայության ինքնատիպության պահպանման յուրահատկությունները, դրա վրա ազդող պատմական ու քաղաքակրթական գործոնները: Հայապահպանության գաղափարի մեջ առանձնակի է կարևորվում աշխարհզգացողության, արվեստի, կենցաղի ու լեզվամտածողության մեջ անհատական սուբյեկտիվ կենսադիրքորոշման դերը:

Բանալի բառեր. Աշխարհաճանաչողություն, աշխարհզգացողություն, էթնոտիպ, կյանքի իմաստ, հայապահպանություն, լեզվամտածողություն, բարոյական ներդաշնակություն, «բացարձակ կյանք», խղճի հանգստություն:

NATIONAL PRESERVATION IN THE CONTEXT OF WORLD RECOGNITION. SOCIAL-PHILOSOPHICAL POINT OF VIEW

Edik Kyuregyhyan

Candidate of Philisiohical Sciences, Associate Professor

Senior Researcher Institute of Philosophy, Sociology and Law NAS RA

SUMMARY

Since the interconnectedness of science, culture, and faith the paramount importance of national, ethnocultural originality is considered in the context of self-development of humanity. The dialectical connection of humanity as a subject with its sub-subjects that determine its unity, such as

different and complementary ethnocultural units are discussed. According to this, the meaning and ideals of the state, family, language, and work are being discussed from the socio-philosophical point of view, which strategically promote the harmonious cooperation of humanity and nations and the effective confrontation with the obstacles of external reality. In the context of this general regularity, the peculiarities of preserving the originality of the Armenians, the historical and civilizational factors influencing it are discussed. The role of individual subjective attitude in worldview, art, everyday life, and linguistic thinking is especially important in the conception of national preservation.

Keywords: world recognition, worldview, ethnotype, the meaning of life, national preservation, linguistic thinking, moral harmony, absolute life, the calmness of conscience.

СОХРАНЕНИЕ НАЦИИ В КОНТЕКСТЕ МИРОПОНИМАНИЯ. СОЦИАЛЬНО-ФИЛОСОФСКИЙ АСПЕКТ

Эдик Кюрегян
Кандидат философских наук, доцент,
старший научный сотрудник Института филисофии,
социологии и права НАН РА,

РЕЗЮМЕ

В контексте современных представлений взаимозависимости науки, искусства и веры в статье рассматривается первостепенное значение национальной, этнокультурной самобытности в саморазвитии человечества. Обсуждается диалектическая связь человечества, как субьекта с обуславливающими его целостность такими подсубьектами, какими являются различные и взаимодополняющие этнокультурные единицы. При этом, с социально-философской точки зрения анализируются тот смысл и идеалы государства, семьи, языка и труда, которые стратегически способствуют гармоническому взаимодействию человечества и наций, эффективному противостоянию препятствий внешней действительности. В контексте данной общей закономерности рассматривается особенности сохранения армянства, влияющие на нее исторические и цивилизационные факторы. В идее сохранения

армянства особо отмечается роль субъективной жизненной позиции в мироощущении, искусстве, быту и стиле мышления.

Ключевые слова: миропознание, мироощущение, этнотип, смысл жизни, сохранение армянства, стиль мышления, нравственная гармония, ‘‘абсолютная жизнь’’, спокойствие совести

ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ. ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՄԵՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆ ՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Անահիտ Ջիջյան
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի գիտական քարտուղար
Ռոմիկ Քոչարյան
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մ.Մաշտոցի անվ. Մատենադարանի ավագ գիտաշխատող

1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԸ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ, ԿՅԱՆՔԻ ՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԻՄԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՈՂ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ

Սոցիոլոգիան իր գոյության ընթացքում ապացուցել է իր ուրույն և կայուն տեղն ու դերը հասարակության մասին գիտությունների համակարգում: Եվ սակայն, XXI դարի քսանամյակից փոքր-ինչ ավել ժամանակաշրջանում բավականաչափ սուր դրսևորումներով ամենքին է հայտիմաց, որ հասարակության գիտական ստույգ վերլուծությունները դեռևս չեն շահել մարդկանց սրտերն ու գտել համընդհանուր ընդունելություն: Թե՛ հասարակական կարծիքը, թե՛ հասարակության բարեկարգ գոյության համար «պատասխանատու ատյանները» շարունակում են գործառնել տարաբնույթ «միֆերի» կամ «առասպելների» ու «պատրանքների» ազդեցության ներքո: Թեև հասարակության կառավարման ու ոչ միշտ հոգևոր-քաղաքակրթական զարգացման համար կիրառվում են սոցիոլոգիական դիսկուրսն ու տերմինաբանությունը և, հատկապես, մասնագիտական չափանիշների հետ որևէ կապ չունեցող «կիրառական հետազոտությունների արդյունքները»: